«ՍԱՄՎԵԼ-ԱՐՏՅՈՄ» ՍՊԸ

«SAMVEL-ARTYOM» LLC

ՀՀ, Արարատի մարզ, գ. Արմաշ
Մառլեն Նիկողոսյան փ. 18
Հեռ. (+374 99) 66-66-61
էլ.փոստ samvelartyom@yandex.ru

Armash vill, Ararat region, RA
Marlen Nikoghosyan str.18
Tel. (+374 99) 66-66-61
E-mail: samvelartyom@yandex.ru

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգելի պարոն նախարար

«Սամվել-Արտյոմ» ՍՊԸ ընկերությունը ՀՀ Արարատի մարզի Արտավազդի օնիքսանման մարմարի, տրավերտինի և գունավոր փշրաքարերի հանքավայրի տրավերտինի Հյուսիս-արևմտյան տեղամասի տարածքում իրականացնում է օգտակար հանածոյի արդյունահանում համաձայն 01.06.2012թ.-ի ՈՇԱԹ-29/237 ընդերքօգտագործման թույլտվության:

Տեղամասի շահագործման ընթացքում ընկերության կողմից կատարվում են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ արտանետվող փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մշտադիտարկում,
2. հողերի քիմիական կազմի մշտադիտարկում,
3. հարակից տարածքների կենսաբազմազանության մոնիթորինգ՝ դիտողական զննման եղանակով,
4. աղմուկի մակարդակի վերահսկողություն:

Ստորև ներկայացնում եմ 2025 թվականի ընթացքում Հյուսիս-արևմտյան տեղամասի տարածքում ընկերության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

«Սամվել-Արտյոմ» ՍՊԸ
տնօրեն՝ Մ. Նիկողոսյան

03.02.2026 թ.